

Հանրակրթական դպրոցներում սովորողի գեղագիտական դաստիարակության իրականացման հիմնախնդիրները

**Գիշյան Նազիկ
Եղոյան Անուշ**

*Մտածող և զգացող մարդ դաստիարակելու համար
անհրաժեշտ է առաջին հերթին նրան դաստիարակել գեղագիտորեն:*

Ֆրիդրիխ Շիլլեր

Հանգուցային բառեր. *մշակութային ժառանգություն, ստեղծագործական մտածողություն, ներդաշնակ հարաբերություններ, գեղեցիկի ընկալում, բարոյական դաստիարակություն, էթիկա*

Նախաբան

Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է, միջոցը, և ուսուցիչը դասապրոցեսի ընթացքում պարտավոր է ստեղծել այդ միջավայրը:

Մեծ է ուսուցչի դերը սերունդների կրթության և դաստիարակության գործում, որը դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատվության մեծ զգացողություն է սերմանում աշակերտների մեջ: Հանրակրթական դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա, բացի սովորողին փոխանցվող ակադեմիական գիտելիքներից, ունի նաև կրթական և դաստիարակչական ուրույն հնարավորություններ, որի մի ճյուղն էլ գեղագիտական դաստիարակությունն է, երբ անհատի մոտ ձևավորում են բարեվարքության նորմեր՝ խոսելու, շփվելու, հանդուրժելու և հարաբերվելու կարողություններ, ինչի պակասը այսօր խիստ նկատելի է մեր հանրության մեջ: Պատահական չէ, որ կիրթ մարդ են համարում նրան, ով օժտված է ոչ միայն բարձր գիտելիքներով, այլև գեղեցիկ պահվածքով: Անհատի այս համակողմանի և բարեկիրթ զարգացումը ապահովում է գեղագիտական դաստիարակությունը:

Որպես հայոց պատմության ուսուցիչ, առարկայի դասավանդման ընթացքում գլխավոր նպատակ են համարում ազգային արժեհամակարգով դաստիարակված ազատ, գիտակից անհատի և հայ քաղաքացու ձևավորումը, բայց այդ նպատակին հասնելու համար պետք է լուծել մի քանի կրթադաստիարակչական ու զարգացման կարևոր խնդիրներ.

- ծանոթացնել հայրենի երկրի մշակույթին, մեր ժողովրդի հանճարով ստեղծված պատմամշակութային կոթողներին, ինչը կվեհացնի սովորողի ոգին, սեր կարթնացնի գեղեցիկի նկատմամբ,
- դաստիարակել մարդկային-բարոյական այնպիսի որակներ ու արժեքներ, ինչպիսիք են բարությունը, ազնվությունը, մաքրությունը, հանդուրժողականությունը և այլն,
- ճանաչելի դարձնել հայրենի երկիրը, հայոց բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը... [4, 7-8]:

Իսկ առարկայի լավ իմացությունը առավելագույնս հնարավորություն կտա իրականացնելու մեր ազգային իդձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը, իսկ անցյալի փորձն ու դրանից դասեր քաղելու ունակությունը՝ լավագույնս ծառայեցնելու մեր հայրենիքի շենացմանն ու կայացմանը [4, 4]:

Որպես մանկավարժներ, որպես արդի շրջանում հանրակրթության ոլորտում առկա հիմնախնդիրներին բախվող մասնագետներ՝ կփորձենք վեր հանել դպրոցներում գոյություն ունեցող սովորողի գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրները և տալ հնարավոր լուծման եղանակները:

Հանրակրթության պետական չափորոշիչը, որը սահմանում է ուսուցումից ակնկալվող արդյունքները, սահմանում է ժամանակակից պահանջներ. ինքնուրույն, քննադատական և ստեղծագործական մտածողություն, համագործակցային աշխատանք: Մինչդեռ սովորողներին փոխանցվող ուսումնական նյութը, որը Հայաստանում հիմնականում տեղի է ունենում դասագրքերի միջոցով, գերազանցապես պարունակում է տվյալ առարկայի վերաբերյալ ակադեմիական նյութ: Իսկ գիտելիքների ստուգման միջոցները (թեմատիկ կամ ամփոփիչ գրավորներ, քննություններ) հիմնվում են միայն չափելի գիտելիքների ստուգման վրա: Առարկայական ծրագրերն ու դասագրքերը ծանրաբեռնված են: Թեև իրականացվել է ծրագրերի բեռնաթափում, սակայն պարզապես մեխանիկորեն թեմաներ կրճատելով խնդիրը չի լուծվում: Բեռնաթափումը պետք է իրականացվի ոչ թե պարզապես քանակի պակասեցման, այլ մոտեցման փոփոխության միջոցով: Մասնավորապես, անհրաժեշտ է հիմնական շեշտը դնել գիտելիքների կիրառման վրա [2, 7]: Բեռնաթափման միջոցով հնարավորություն ստեղծել իրականացնելու հոգևոր և մշակութային գիտելիքների փոխանցման ճանապարհին ընկած գեղագիտական ճիշտ

դաստիարակությունը և դրանից բխող կարողությունների ձևավորման գործընթացը:

Մեր կրթական ոլորտը ուսուցչի առջև խնդիր է դնում ձևավորել ժամանակակից անհատ, ով ունակ է ինքնուրույն գործելու, սեփական դիրքորոշումն արտահայտելու, ստեղծագործաբար մտածելու, ինքնիրացման և այլ կարողություններ դրսևորելու: Նախատեսվում է նաև սովորողի մոտ զարգացնել քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, ճիշտ որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները: Շատ երկար կարելի է թվարկել այն պահանջներն ու վերջնարդյունքները, որոնք ակնկալվում են հանրակրթական դպրոցներում՝ տարաբնույթ պահանջներ դնելով մանկավարժների առջև: Բայց մոռանում ենք մի բան. այդքան խորը գիտելիքների կողքին պետք է դրվի տարրական քաղաքավարության և վարվեցողության իմացության պահանջը, որի բացակայությունն այսօր խիստ զգացվում է ամենուրեք, սկսած դպրոցից և վերջացրած ազգային ամենաբարձր ատյաններում: Դպրոցահասակ երեխայի վարքագիծը դպրոցում շատ խնդրահարույց է այսօր. նրա պահվածքը, մեծերի հետ խոսելու կուլտուրան, ճաշակը, անզամ հագնվելու ոճը շատ մտածմունքների տեղիք են տալիս: Հաճախ աշակերտն իր հագուկապով չի տարբերվում ուսուցչից, իսկ երբեմն էլ մրցակցություն է ստեղծում համադասարանցիների հետ՝ մեծացնելով ամկա սոցիալական անհավասարությունը: Անշուշտ, այստեղ անելիք ունեն և՛ դպրոցը, և՛ ուսուցիչը, և՛ ծնողը:

Հանրակրթական դպրոցներում, առարկայական դասաժամերին, երբ դասարանը համալրված է երեսունից ավելի աշակերտով, մեծ հաշվով բացառվում է որակյալ կրթության ապահովումը, իսկ սովորողի համակողմանի դաստիարակության մասին խոսելն անզամ ավելորդ է, մանավանդ այն դեպքում, երբ աշակերտների մեծ մասը չունի լռելու, լսելու կարողություն, իսկ ուսուցչի համար շատ կարևոր է, որ աշակերտը ուսումնական օրվա ավարտին ոչ միայն ձեռք բերի գիտելիք օրվա դասից, այլև բարոյական դաստիարակություն ստանա, զարգանա երեխայի գեղագիտական ճաշակը, բայց արդյո՞ք այսօր դա այդպես է, և արդյո՞ք բոլոր ուսուցիչներն են կարողանում իրականացնել այս գործընթացը՝ հաճախակի կազմակերպելով այցելություններ մշակութային օջախներ,

արվեստի կենտրոններ, հետազոտական լաբորատորիաներ: Համոզված ենք՝ ոչ որովհետև ծրագիրը խիտ է, իսկ ժամաքանակը՝ քիչ: Իսկ ինչո՞ւ չի բավականացնում ծրագրով նախատեսված ժամաքանակը: Պատասխանը մեկն է, որովհետև պահանջները երբեմն ոչ տեղին են և շատ: Իսկ դասագրքերում ուսումնական նյութերը շարադրված են ծավալուն և երբեմն անհասկանալի, ինչու չէ, նաև անհետաքրքիր տեղեկատվությամբ: Փոխարենը մենք առաջարկում ենք բեռնաթափել, թեթևացնել ծրագրերն ու դասագրքերը, իսկ հայագիտական առարկանների օրինակ՝ հայոց պատմության, հայրենագիտության, գրականության առարկայական չափորոշիչներից հանել գրավոր աշխատանքներ հանձնարարելու պահանջը, և այդ ժամաքանակը տրամադրել գործնական պարապմունքներին՝ արշավների, էքսկուրսիաների կազմակերպում դեպի թանգարաններ, պատմամշակութային օջախներ, կինոթատրոններ՝ դրանով իսկ հետաքրքրիր դարձնելով երեխաների առօրյան, չափազանց հրապուրիչ դարձնելով դպրոցը: Մենք առաջարկում ենք ծրագրով գրավորներին հատկացված ժամաքանակը (կիսամյակում երեք-չորս անգամ) տրամադրել երեխաների համար այդքան անհրաժեշտ ու հաճելի զբաղմունքին:

Գեղագիտական դաստիարակությունը պետք է կազմի երեխայի առօրյա դաստիարակության մի մասնիկը: Ինչպես նշել է Ուշինսկին. «Երեխան մտածում է ձևերով, գույներով, ձայներով, առհասարակ «զգայություններով», այստեղից է ծնվում զննական ուսուցման անհրաժեշտությունը երեխաների համար, որը կառուցվում է ոչ թե վերացական պատկերացումների և բառերի, այլ կոնկրետ, երեխայի կողմից անմիջականորեն ընկալվող պատկերների վրա» [3, 326]: Տեղին է ասել՝ «Լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել»:

Գեղագիտական դաստիարակության էությունը

Իսկ ի՞նչ է գեղագիտական դաստիարակությունը, և ի՞նչ նպատակ է հետապնդում այն հանրակրթության գործընթացում:

Գեղագիտական դաստիարակությունը կազմում է դաստիարակության մի մասնիկը: «Դաստիարակություն» բառը ծագում է հին պարսկերենից: Հին Պարսկաստանում դաստիարակ էին անվանում այն փոխարքային, որը ղեկավարում էր աճող սերնդի հոգևոր զարգացումը [5, 14]: Դաստիարակությունը ընդունվում է *որպես մանկավարժական գործընթաց*, որի ամենաեական առանձնահատկությունը երկկողմանիությունն է, քանի որ նրան մասնակցում են երկու սուբյեկտներ՝ դաստիարակը և սանը, որոնք կարող են համագործակցել, պլանավորել դաստիա-

րակելու ենթակա հատկանիշները և դրանք սանին փոխանցելու, նրան հաղորդելու ուղիները, եղանակները, պայմանները, կազմակերպական ձևերը [5, 16]:

Դաստիարակությունը հասկացվում է *որպես անձի վարքագիծ՝* բնավորություն, հարաբերությունների մշակույթ, աշխատանքային մշակույթի յուրացում և այլն, այսինքն՝ որպես բարոյական, աշխատանքային, ֆիզիկական և գեղագիտական դաստիարակություն [5, 16]:

Գեղագիտական դաստիարակությունը գեղեցիկն ընկալելու, զգալու, գնահատելու և գեղագիտական արժեքներ ստեղծելու, ստեղծագործական անհատի ձևավորմանը նպաստակաուղղված գործընթաց է: Երեխաները նույնպես ընդունակ են արձագանքելու շրջապատող միջավայրի գեղեցկությանը, բնությանը, երաժշտությանը՝ ձգտելով ստեղծագործել՝ երգել, պարել, նկարել և այլն: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչը: Հայտնի է, որ երեխաները նման չեն մեծերին. նրանք տարբերվում են իրենց՝ գեղեցիկն ընկալելու կարողությամբ, ուստի ուսուցչի խնդիրն է չխեղդել մանկական ընկալման և զգացմունքների յուրօրինակությունը՝ երեխային տալով հնարավորություն իր աշխարհը բացելու համար: Այդ դեպքում ինքն էլ հնարավորություն կունենա իրեն արդեն հայտնի երևույթները, փաստերը, գործընթացները տեսնելու նորովի, ավելի թարմ, տեսական կաղապարներից դուրս: Իսկ ի՞նչ է «գեղեցիկը». այս հարցի պատասխանը փնտրել են իմաստասերները դեռևս շատ հին ժամանակներում [8, 5]: Քանի որ դժվար է այս հարցին սպառիչ պատասխան տալ, ուստի կարող ենք ներկայացնել սուբյեկտիվ կարծիքներ դեռևս անտիկ մտածողներից և փիլիսոփաներից... Սոկրատեսը գեղեցիկ է համարել այն ամենը, ինչ օգտակար է և նպատակահարմար, իսկ Պլատոնը այն բաժանում է երկու աստիճանի՝ ֆիզիկական և հոգևոր՝ առաջինի մեջ ներառելով բնական և մարմնական գեղեցկությունը, որը, ցավոք, խիստ անցողիկ է, իսկ երկրորդի մեջ՝ հոգու գեղեցկությունը, որն ավելի երկար կարող է պահպանվել [8, 5]: Գեղեցիկի երրորդ աստիճանը այն երևույթներն են, որ ստեղծվում են գիտությունների և արվեստների շնորհիվ [8, 6]:

Գեղագիտական դաստիարակությունը բնության և հասարակության ճանաչողության միջոցներից մեկն է: Նրա նպատակը գեղագիտական մշակույթի ձևավորումն է, ինչպես նաև երեխայի ճաշակը, իդեալը, գեղեցիկը գնահատելու կարողությունը: Գեղագիտական դաստիարակու-

թյունը ներդաշնակ է դարձնում մարդուն, զարգացնում նրա ստեղծագործական ունակությունները:

Գեղագիտությունը կամ էսթետիկան (հունարեն՝ *aisteticos* - զգայությամբ ընկալվող) թեև որպես գիտություն ձևավորվել է միայն 18-րդ դարում (գերմանացի փիլիսոփա Ա. Գ. Բաումգարտենի կողմից), սակայն, որպես իմացության հուզագգացմունքային և գեղեցիկի ճանաչմանն ուղղված ոլորտ, գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում: Մարդը մշտապես ունեցել է գեղեցիկի պահանջը, գեղեցիկը կազմել է նրա հոգևոր կյանքի անքակտելի մասը, որի ճանաչումը, իմացությունը եղել են մարդկային գործունեության հիմնական նպատակներից, և, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչը:

Այս գործում սովորողին օգնության է գալիս ուսուցիչը՝ ձևավորելու գեղագիտական բարձր ճաշակ, այդ թվում՝

- գեղագիտական ընկալում՝ գեղարվեստն արվեստում և կյանքում տեսնելու ունակություն,
- գեղագիտական զգացմունքներ. սրանք անձի հուզական փորձառություններ են, հիմնված են բնության, արվեստի և այլ երևույթների գնահատման վերաբերմունքի վրա,
- գեղագիտական իդեալներ. սրանք անհատի գաղափարներն են կատարելության մասին,
- գեղագիտական կարիքներ. հաղորդակցման ձգտումը գեղեցկության տարբեր դրսևորումների հետ,
- գեղագիտական նախասիրություններ. սա անհատի կողմից գեղեցիկն ու տգեղը տարբերելու, առկա գեղագիտական գիտելիքներն ու ձևավորված իդեալները համապատասխան գնահատելու ունակությունն է:

Ինչո՞ւ է կարևոր գեղագիտական դաստիարակությունը հանրակրթական դպրոցում

Ուսուցիչը յուրաքանչյուր դասաժամի կարող է երեխաներին սովորեցնել տեսնելու կյանքի, բնության, աշխատանքի գեղեցկությունը, ինչպես նաև աշակերտի մեջ ձևավորել գեղագիտական իդեալներ, եթե, իհարկե, դրա համար նա ունի ցանկություն և հնարավորություն: Առաջինը ուսուցչի տեսակով է պայմանավորված, իսկ երկրորդը՝ հանրակրթության ոլորտում առկա միջոցներով: Հայտնի ճշմարտություն է այն իրողությունը, որ ուժեղ պետության հիմքում ընկած է որակյալ դպրոցը՝

իր որակյալ մասնագետներով ու սաներով: Այս իմաստով շատ գովելի է վերջին տարիներին պետության կողմից իրականացվող արվեստի և մշակույթի հետ երեխաներին առնչակից դարձնելու արձանատային ծրագիրը: Աշակերտին հատկացված այդ տոմսերով մեկ ուսումնական տարվա ընթացքում երեխան կարող է հաճախել երեք մշակութային օջախ:

Ուսուցիչը պետք է հիշի, որ սովորողի գեղագիտական դաստիարակությունը ուղեկցելու է նրան ողջ կյանքի ընթացքում, այն ճաշակն ու կուլտուրան, որ նա ձեռք է բերում դպրոցում, հարատև ուղեկցելու են նրան, և երբեմն կարող են նաև ճակատագրական նշանակություն ունենալ անհատի համար: Երաժշտական լսողությամբ օժտված երեխայի համար դասական երաժշտության մեկ ունկնդրումն անգամ կարող է ուղորդող լինել նոր աշխարհ բացելով նրա համար: Անգլիացի կոմպոզիտոր Էթել Սմիթը (1858-1944 թթ.) գրել է. «Իմ ողջ կյանքի ընթացքը որոշվեց մի դաստիարակչուհու կողմից: Երբ ես 12 տարեկան էի, Լայպցիգի կոնսերվատորիայի շրջանավարտ իմ դաստիարակչուհուց առաջին անգամ լսեցի դասական երաժշտություն, և իմ առջև բացվեց մի նոր աշխարհ»: Մեր մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ որոշ երեխաներ հիանում են դասական երաժշտությամբ, մյուսները՝ ծանր ռոքով: Գեղագիտական դաստիարակության խնդիրները հանրակրթական դպրոցում տարբեր են՝ կախված երեխաների տարիքային առանձնահատկություններից և մատուցման ձևերից: Ուսուցիչը պետք է երեխային շրջապատի սիրով ու հոգատարությամբ՝ «ստիպելով» նրան տեսնել գեղեցիկը:

Դպրոցում հայոց պատմության դասաժամին, հատկապես «Մշակույթ» բաժնում, երեխաները ծանոթանում են բազմաթիվ կոմպոզիտորների ստեղծագործություններին, առնչվում երաժշտական տարբեր ժանրերի հետ, ինչպես նաև տեղեկություններ են ստանում արվեստի գործիչների մասին:

Դպրոցականների գեղարվեստական և գեղագիտական դաստիարակությունը կատարվում է նաև երգ-երաժշտության, կերպարվեստի դասերին: Երեխաները ծանոթանում են ստեղծագործելու տեխնիկային, աշխատանքային նյութերի հետ աշխատելու տեխնոլոգիաներին, նկարչության միջոցով սովորում են արտահայտել իրենց զգացմունքներն ու հույզերը:

Ոչ պակաս կարևոր են մյուս առարկաները: Գրականության դասերը զարգացնում են դպրոցականների հուզական և զգայական ոլորտը, սովոր-

րեցնում նրանց ապրումակցել հերոսներին, նկատել գեղարվեստական պատկերների գեղեցկությունը: Աշխարհագրությունն ու կենսաբանությունը նախատեսված են ոչ միայն երեխաներին գիտելիքներով հագեցնելու, այլև երեխաների մեջ բնության հանդեպ սեր արթնացնելու համար: Ճշգրիտ գիտությունները ցույց են տալիս բանաձևերի, թեորմների խիստ գեղեցկությունը, թույլ են տալիս զգալ հետազոտական խնդիրներ լուծելու հաճույքը: Այնուամենայնիվ, գեղագիտական դաստիարակության ուղղությամբ հիմնական աշխատանքները իրականացվում են դպրոցական արտադասարանական պարապմունքների ընթացքում՝ դասաժամերից դուրս: Այս իմաստով հանրակրթական դպրոցի աշակերտների հետ աշխատանքը պետք է իրականացվի հետևյալ ոլորտներում.

- դասերից հետո այցելություն պատկերասրահ, ծանոթություն արվեստի գործերին, գեղագիտական տեղեկատվություն տրամադրում,
- երեխաների հետ ականավոր նկարիչների գործերի դիտում, դասական երաժշտության ունկնդրում, բարձրորակ գրականության ընթերցանություն,
- սովորողներին ուղեկցում դեպի թանգարաններ, թատրոններ, ֆիլմարմոնիկ հաստատություններ, համերգներ, մշակութային պատմական կոթողներ, եկեղեցիներ՝ երեխաներին մասնակից դարձնելով նաև հոգևոր դաստիարակությանը:

Իհարկե, այս ամենը գործող կրթակարգով իրականացվում է միայն դասերի ավարտից հետո, երբ երեխան արդեն հոգնած է, կամ էլ այլ ավելի հետաքրքիր զբաղմունք ունի: Ինչպես արդեն առաջարկել էինք, կցանկանայինք, որ այս ահռելի աշխատանքի մի մասը գոնե կատարվեր դասերի ժամանակ՝ նախապես հատկացված ժամաքանակով: Մեր աշխատանքային փորձը ցույց է տվել, որ երեխաները շատ են սիրում այդ այցելությունները, և ամեն անգամ, երբ հայտարարում ենք, որ դասերից հետո զնալու ենք պատկերասրահ կամ թանգարան, ուրախության ճիչերին հաջորդում են ավստասանքի խոսքերը, որ իրենք երաժշտական դպրոցում այդ ժամին հաճախում ունեն, կամ էլ՝ այլ պարապմունքներ, որոնք նույնպես անհրաժեշտ են երեխային:

Ոչ բոլոր ընտանիքները հնարավորություն ունեն ներկա լինել լավագույն համերգներին ու ցուցահանդեսներին: Այստեղ նույնպես մեծ է ուսուցչի դերը: Ամենահեռավոր գյուղում կարելի է կազմակերպել արտահայտիչ ընթերցանության երեկոներ, դիտել նկարներ, քանդակներ պատ-

կերող գրքեր, երաժշտական գործեր լսել, դիտել լավ ֆիլմեր և քննարկել դրանք: Վերջերս ավանդույթ է դարձել հանրապետության տարբեր բնակավայրերում, գյուղերում պարբերաբար մշակութային փառատոնների անցկացումը: Կառավարության կողմից մշակված ծրագրերով զարկ է տրվում ներգնա տուրիզմի տարածմանը, ազգագրական տարբեր միջոցառումներին դպրոցականների ներգրավմանը, որը նույնպես շատ խրախուսելի է, քանզի հավելյալ գիտելիք է փոխանցվում սովորողներին հայ ժողովրդի պատմության և ավանդույթների մասին: Օրինակ՝ Լոռվա տարածաշրջանում վերջերս «Լոռի Բերդ» պատմամշակութային ամրոցում ավանդական հայկական խոհանոցի, ռազմարվեստի պատմության և ազգագրական տարածների թեմայով շատ պատկերավոր ցուցադրություն էր կազմակերպվել, որը սովորողի գեղագիտական դաստիարակության լավագույն օրինակներից մեկն է: Այդպիսի լավ օրինակ է նաև ավանդույթ դարձած «Լոռվա ձմեռ» ամենամյա ձմեռային խաղերի և մարմնակրթության գեղեցիկ փառատոնը, որին մեծ հաճույքով են մասնակցում մեր դպրոցականները:

Էքսկուրսիաները՝ որպես սովորողի բարոյական դաստիարակության և գեղագիտական ճաշակի զարգացման միջոց, ունեն բացառիկ դեր և նշանակություն: Մեր փորձից էլնելով՝ կարևորում ենք դրանց հաճախակի կազմակերպումը: Բայց դրանք էլ կազմակերպվում են տարվա մեջ մեկ կամ երկու անգամ, որովհետև հավելյալ ծախսեր են նախատեսում ծնողների համար: Հենց այստեղ է, որ կարևորվում է ծնողական համայնքի աջակցության դերը երեխաների գեղագիտական դաստիարակության գործում: Ոչ թե խոչընդոտել, այլ նպաստել այդ միջոցառումների իրականացմանը:

Դպրոցներում հաճախակի պետք է կազմակերպել շնորհալի ու ստեղծագործող երեխաների աշխատանքների ցուցահանդես, այնուհետև կազմակերպել քննարկումներ և վերլուծություններ: Ուսուցչի դերը շատ կարևոր է ազգային տոներին ու ավանդույթներին, ազգապահպանությանը նվիրված համադպրոցական միջոցառումների կազմակերպման գործում: Փորձը ցույց է տվել, որ դա նույնպես գեղագիտական դաստիարակության արդյունավետ ձևերից մեկն է:

Այսօր հանրակրթական դպրոցի ուսուցչի խնդիրն է սովորողի մոտ սեր առաջացնել դեպի գեղեցիկն ու արվեստը՝ յուրաքանչյուր հանրակրթական առարկայի ուսուցման գործընթացում իրականացնելով աշակերտների գեղագիտական կրթությունն ու դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակության օրինակներ մեր աշխատանքային փորձից

Դպրոցում կազմակերպել ենք բազմաթիվ միջոցառումներ, էքսկուրսիաներ, համագործակցային և ինտեգրված դասեր, ներկայացումներ պատմական թեմաներով՝ Վարդանաց տոն, «Արշակ և Շապուհ», Պատմության խոսուն վկաները, ազգային-եկեղեցական՝ Համբարձում, Տրնդեզ, Թարգմանչաց տոն, Աստվածաշունչ մատյան, Զատիկ, Սուրբ Սարգիս (ոչՎալենտին), Սուրբ Պատարագի մատուցման և Մյուռնոսիների կատարման կարգը և այլն, որոնք միտված են նպաստելու աշակերտի գեղագիտական դաստիարակությանը:

2021 թ. ամռանը մեր աշակերտների հետ հանձն առանք Տավուշի մարզի պատմաճարտարապետական կոթողներից մեկի՝ Մշկավանքի ուսումնասիրությունը:

Առավոտ կանուխ, 8-9-րդ դասարանցի յոթ աշակերտների հետ միասին ուղևորվեցինք հարազատ Տավուշ երկիր: Կողքից դեպի վանական համալիր առկա է գրունտային դժվարանցանելի ավտոճանապարհ: Մեկնեցիք Կողբափոր գավառի Մշկավանք կոչվող համալիր. այն մի հրաշք տեղանք է՝ շրջապատված միջնադարյան գերեզմանատեղիով ու մատուռներով... Մեզ հետ վերցրել էինք անհրաժեշտ բոլոր պարագաները՝ այնտեղ գիշերելու և արևածագը դիմավորելու համար (սա է իսկական գեղագիտական հաճույքը, որ կարող է մանկավարժը երբևէ ապրել, այն էլ իր սաների հետ):

Օգտագործել ենք նախագծային մեթոդի հնարավորությունները և երեխաների մի խմբին հանձնարարել ծանոթանալ հեղինակային նյութերին ու առկա գրականությանը, ապա տեղում ներկայացնել հավաքագրված նյութը, ինչն էլ մեծ սիրով արվեց երեխաների կողմից: Մշկավանքի մասին հավաքված տեղեկությունները համադրեցինք՝ հին ու նոր ավանդապատումները միացնելով իրար:

Աշակերտների մեկ այլ խմբին հանձնարարվել էր ներկայացնել Մշկավանքի ճարտարապետությունը. «Սուրբ Աստվածածին եկեղեցին քառակուսի հատակագծով միանավ դահլիճ է, որը ծածկված է կիսագլանային թաղով: Արևելյան կիսաշրջանաձև խորանի երկու կողմերում գտնվում են երկհարկանի, նեղ ավանդատները: Միակ մուտքը, որը բացված է արևմտյան կողմից, ձևավորված է զույգ կիսագլանիկներով և զարդարված հյուսվածքանախշերով, ուղղանկյուն շրջանակի մեջ առնված կիսաշրջանաձև կամարով, բացվում է դեպի գավիթը: Եկեղեցու արևելյան ճակատը (ավագ խորանի պատուհանից վերև) հարդարված է ոճավոր-

ված խաչով, որի վերի թևին ցույի գլուխ է քանդակված: Հին գերեզմանատունը տարածված է եկեղեցու շուրջը» [7, 163-164]:

Մշկավանքը ուշագրավ է իր հարուստ խաչաքանդակներով և վիմական արձանագրություններով: Նորոգման աշխատանքների ժամանակ ամրացվել են գավթի խաչաձևող կամարները և դրանց հենվող թաղերը: Նորոգվել են պատերի քայքայված մասերը, խցերը, շքամուտքը, սալապատվել են տանիքները:

Վերականգնման նախագծի վրա աշխատելիս մենք համոզվեցինք, որ լրիվ հնարավոր է վերականգնել թե գավթի խարխլված խաչվող կամարները և թե ծածկի համակարգը: Համանման հուշարձանների կոնստրուկցիաների ուսումնասիրությունը թույլ տվեց գալ այն եզրակացության, որ լրիվ հնարավոր է վերականգնել խաչվող կամարների համակարգը՝ առանց դիմելու լրացուցիչ երկաթբետոնե կմախքահենքի [1, 167]:

Հուշարձանը նորոգվել է 1955-60 թ. թ. ճարտարապետներ Հ. Հակոբյանի և Յու. Թամանյանի նախագծերով: Մշկավանքը ներառված է Հայաստանի պետական պահպանության հուշարձանների ցանկում «10. 41. 23» ցուցիչով: Ներկայումս հանդիսանում է չգործող վանական համալիր:

Նախագծային մեթոդով հետազոտության արդյունքում սովորողների ուժերով վեր հանվեցին վանքի պահպանության հետ կապված հիմնախնդիրները. վանքի գավիթը փլուզման եզրին է գտնվում, բաց երդիկից անձրևաջրերի անընդհատ ներհոսքը խարխլել է քարակոփ պատերի ամրությունը: Տեղում վեր հանեցինք վանքի ծայրահեղ անմխիթար վիճակը և կապ հաստատեցինք Տավուշի մարզպետարանի պատմամշակութային հուշարձանների պահպանության գծով աշխատակից, հուշարձանների պաշտպանության գծով պատասխանատու Ա. Դովլաթբեկյանի հետ:

Երեխաները ներկայացրին իրենց ուսումնասիրությունները և մեծ բավականություն ու գեղազիտական հաճույք ստացան, հատկապես, երբ ամեն ինչ տեսան իրենց աչքերով: Տղաներից մեկը մագլցեց եկեղեցու արևմտյան պատին, որտեղ գտնվում էր արևային ժամացույցը, և իր ձեռքով փայտե ձող ամրացրեց ժամացույցի կենտրոնում, որից հետո երևաց մեր նախնիների հնարամիտ գիտելիքի արդյունքը՝ ժամացույցի սլաքը ցույց տվեց օրվա ժամը:

Այսպիսի հրաշալի մի քանի օր անցկացրեցինք Մշկավանքի գրկում, վայելեցինք բնության հրաշագեղ պարզները՝ սովորողի մեջ ձևավորելով գեղազիտական ճաշակ:

Եզրակացություն

Արձագանքելով նոր ժամանակների մարտահրավերներին՝ հանրակրթության ոլորտը նոր պահանջներ է դնում մատաղ սերնդի դաստիարակության գործում: Խնդիր է դրվում ժամանակակից անհատի ձևավորման, ով ունակ է ինքնուրույն գործելու, սեփական դիրքորոշումն արտահայտելու, ստեղծագործաբար մտածելու, ինքնիրացման և այլ կարողություններ դրսևորելու: Ժամանակակից կրթական համակարգն իր առջև ծառայած խնդիրների լուծման համար նոր կրթական չափորոշիչներով հստակ վերջնարդյունքներ է ձևակերպել, որին հնարավոր է հասնել նախագծային հետազոտական աշխատանքների, միջառարկայական կապերի ու հատկապես էքսկուրսիաների ու արշավների միջոցով: Գեղագիտական դաստիարակության գործում մեծ է հանրակրթական դպրոցի դերը, ու մանավանդ կարևորվում է ուսուցչի կողմից առարկայական դասաժամերի ճիշտ կազմակերպման ձևերի ընտրությունը: Տեղին ենք համարում համագործակցային եղանակով անցկացվող ինտեգրված դասերի հաճախակի կազմակերպումը, երբ սովորողը միաժամանակ հայտնվում է մի քանի հետաքրքրությունների շրջանակներում: Այս դասերը հնարավորություն են ստեղծում սովորողի համար նոր կարողունակությունների մակարդակ ձևավորել: Ինչ վերաբերում է էքսկուրսիաների և արշավների անցկացմանը, ապա դրանք սովորողի բարոյական դաստիարակության և գեղագիտական ճաշակի զարգացման անփոխարինելի միջոցներից են, և գտնում ենք, որ ցանկացած առարկայի ուսուցման դաս կարելի է անցկացնել թեմայից բխող համապատասխան միջավայրում:

Աշակերտների գեղագիտական կրթության և դաստիարակության առումով դպրոցում դասավանդվող բոլոր առարկաներն էլ ունեն լայն հնարավորություն՝ ապահովելու աշակերտների գեղագիտական դաստիարակությունը: Կարևոր է, որ ուսուցիչները բացահայտեն դրանք և հասցնեն աշակերտների գիտակցությանը: Մովորողների գեղագիտական կրթությունը և դաստիարակությունը կարելի է իրականացնել ոչ միայն դասարանական, այլև արտադպրոցական աշխատանքների և պարապմունքների միջոցով: Այս աշխատանքը ճիշտ և անխոչընդոտ իրականացնելու համար առաջարկում ենք՝

- հանրակրթական դպրոցի 5-7-րդ դասարաններում երեխաներին, որպես պարտադիր առարկա, դասավանդել «Գեղագիտություն և վարվեցողության հիմունքներ» առարկան,
- բեռնաթափել, թեթևացնել առարկայական ծրագրերն ու դասագրքերը՝ լուրջ ուշադրություն դարձնելով բառամթերքին և շարադրանքի պարզությանը,

- հայագիտական առարկաների գրավոր աշխատանքների ժամերը փոխարինել գործնական այնպիսի պարապմունքներով, որոնք կունենան էքսկուրսիաների, արշավների, բազմաբնույթ այցելությունների ձևաչափ, ինչն էլ կբեռնաթափի երեխայի գերծանրաբեռնված ուսումնական առօրյան,
- վերանայել դասարանների կազմավորման կարգով ամրագրված սովորողների թվաքանակը՝ կրճատելով այն, քանի որ երեսուն և ավելի աշակերտներով համալրված դասարաններում շատ բարդ է անգամ կարգուկանոնի պահպանումը, իսկ սովորողի բարոյական և գեղագիտական դաստիարակության հարցերի իրականացումը՝ գրեթե անհնար,
- ՀՀ ԿԳՄՍ նախարարության անվճար աբոնեմենտային ծրագրում ավելացնել թանգարանների այցելության թվաքանակը, այն տարեկան դարձնելով գոնե երեք անգամ,
- սովորողի գեղագիտական ընկալումների ձևավորման հիմքում դնել միասնական դպրոցական հագուստ կրելու սկզբունքը, որը կարող է հովանավորվել պետական որոշակի աջակցությամբ:

Գրականություն

1. Թամանյան Յու., Մշկավանքի վերականգնումը, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, 1977:
2. Խաչատրյան Ս., Պետրոսյան Ս., Թերզյան Գ., Ուսուցում և դաստիարակություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան, 2013:
3. Կոնստանտինով Ն. Ա., Մեդինսկի Ե. Ն., Շաբաևա Մ. Ֆ., Մանկավարժության պատմություն, Երևան, 1972:
4. Ղուկասյան Ա., Գյուլբրոդադյան Ա., Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
5. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1, Երևան, 2005:
6. Միքայելյան Հ. Ս., Մաթեմատիկական դպրոցում. գիտամեթոդական ամսագիր, թիվ 4(107), Երևան, 2016:
7. Շախկյան Գ., Լոռի. պատմության քարակերտ էջերը, Երևան, 1986:
8. Պետրոսյան Ս., Խաչատրյան Ս., հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի «Հասարակագիտություն» առարկայի դասագիրք, Երևան, 2014:

Проблемы эстетического воспитания учащихся общеобразовательных школ

*Гишян Назик
Едоян Ануш*

Резюме

Ключевые слова: культурное наследие, творческое мышление, гармоничные отношения, восприятие прекрасного, моральное воспитание, этика

Образовательная сфера, отвечая вызовам нового времени, предъявляет новые требования к воспитанию подрастающего поколения. Задача состоит в том, чтобы формировать современную личность, способную действовать самостоятельно, выражать свою позицию, творчески мыслить, проявлять самореализацию и другие способности: таким образом, создать возможность для формирования нового уровня развития умения у учащихся. Современная система образования поставила перед собой четкие задачи, которых можно добиться с помощью экскурсионно-конструкторских работ. Современная система образования должна носить инновационный характер, чтобы решить стоящие перед ней задачи. Велика роль общеобразовательной школы в области эстетического воспитания: особенно важен выбор правильного способа организации уроков. Экскурсии, как средство нравственного воспитания и развития эстетического вкуса учащихся, играют исключительную роль и значение. Исходя из нашего опыта, придаем важность их частой организации. Считаем целесообразной частую организацию интегрированных уроков, когда учащийся оказывается одновременно в рамках нескольких интересов, комбинируя и синтезируя знания, полученные по разным учебным предметам. Все предметы, преподаваемые в школе, имеют широкие возможности для обеспечения эстетического воспитания у учащихся. Учителя могут обнаружить их и донести до сознания учеников. Эстетическое воспитание учащихся должно осуществляться не только на уроках, но и во внеурочной деятельности. Чтобы выполнить эту задачу правильно и беспочвенно, мы предлагаем:

- добавить в общеобразовательных школах предмет «Эстетика и основы поведения» в качестве обязательного предмета для школьников 5-7 классов,
- разгрузить, облегчить предметные программы и учебники,
- заменить часы письменных работ по арменоведческим предметам практическими занятиями, которые будут иметь масштаб экскурсий, экспедиций и различных мероприятий,
- уменьшить количество учеников в классах,
- носить единую школьную форму с государственной поддержкой.

Problems of Aesthetic Education among Students of Secondary Schools

*Gishyan Nazik
Yedoyan Anush*

Summary

Key words: cultural heritage, creative thinking, harmonious relationships, perception of beauty, moral education, ethics

The educational sphere, responding to the challenges of modern times, is creating new demands in the education of generations. The task is to find an individual who is able to act independently, express position, to think creatively, show self-realization and other abilities. The modern educational standards for problem solution can be achieved through excursions and research works.

The role of the public school in the field of aesthetic education is great, and especially the choice of appropriate ways of organizing lessons. Excursions, as a means of cultural education and development of aesthetic taste of the student, play an exceptional role and importance. Based on our experience, I attach importance to their frequent organization. We consider it expedient to frequently organize integrated lessons, when students find themselves simultaneously within the framework of several interests, combining and synthesizing knowledge gained in different academic subjects.

All the subjects taught at school have wide opportunity to ensure the aesthetic education of students. Students' aesthetic education and upbringing should be actualized not only through in-class activities but extra-curricular practices as well. To accomplish this task correctly and groundlessly, we suggest:

- adding the subject “Aesthetics and Basics of Behavior” in schools as a compulsory subject for pupils of 5-7 grades,
- unloading, facilitating subject programs and textbooks,
- replacing the amount of written exams on Armenian studies with practical exercises, which will include the scale of excursions, expeditions and various events,
- reducing the number of students in classes,
- wearing school uniform with state support.

Ներկայացվել է 12.02.2022 թ.

Գրախոսվել է 13.05.2022 թ.

Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.